

Երեւան, 28 Յուլիս 2022

Յ. Բ.Ը. Միութեան Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողով,

Յ.Բ.Ը. Միութեան Գահիրէի Մասնաճիւղ,

Սիրելի Միութենականներ եւ բարեկամներ,

Խորունկ ցաւով եւ կսկիծով իմացաւք եգիպտահայ գաղութի երեւելի դէմքերէն եւ Յ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանակի ղեկավարներէն մեր սիրելի գործակից Տոքթ. Վիգէն Ճիգմէճեանի անժամանակ մահուան գոյժը:

Արդարեւ, ընդհանրապէս եգիպտահայութեան ազգային կեանքէն եւ մասնաւորապէս մեր Միութեան կառոյցներէն ներս վերջին տասնամեակներուն տիրական ներկայութիւն ունեցած եւ նուիրեալ ու աշխոյժ գործունեութիւն ծաւալած Տոքթ.ին ծանր եւ անդառնալի կորուստը ցնցած է բոլորս: Զանգուցեալը օժտուած էր ծառայական ոգիով, լաւատեսութեամբ եւ կենսախիւնդ բնաւորութեամբ՝ միշտ պատրաստ իրագործելու ազգօգուտ նոր ծրագիրներ, խանդավառութիւն ստեղծելով նաեւ իր շուրջը:

Խորապէս սգալով Տոքթ. Վիգէն Ճիգմէճեանի դառնաղետ կորուստը, յանուն Զայաստանի Յ.Բ.Ը.Մ.ի, եւ անձամբ իմ կողմէ, խորազգաց ցաւակցութիւններ եւ հանգուցեալին բարի յիշատակներովը ապրելու մխիթարանքի խօսքեր կը յղենք Ճիգմէճեան ընտանիքի անդամներուն, հարազատներուն, բարեկամներուն, ինչպէս նաեւ Յ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանակին:

Սիրելի Տոքթ.ին յիշատակը մի՛շտ վառ պիտի մնայ մեր սրտերուն մէջ: Թող Աստուած խաղաղութիւն եւ հանգստութիւն շնորհէ ննջեցեալին հոգիին, օրինէ Ձեր բոլորին ընտանիքները եւ երկար կեանք պարգեւէ բոլորիդ:

Անկեղծ վշտակցութեամբ՝



Վազգէն Եագուպեան

Յ.Բ.Ը.Մ. Զայաստանի նախագահ

Յ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ